

Յանտիոքեան խնդիրս խառնեցաւ, որպէս տեսաք, եւ Տաճարականացն, չարաչար քան զառաջինն. զի վասն զկողմն ունելոյ նոցա զկոմսին, յետ բազում անգամ ողորջանաց՝ մերժեալ էր գնոսա Լեւոնի յերկրէ իւրմէ եւ ՚ի կալուածոց նոցին. այլ եւ, ըստ ամբաստանելոյ նոցա առ Պապն, զկարասի նոցին ՚ի հուր դատեալ էր, զանասունսն յափշտակեալ, վնաս գործեալ 50,000 ոսկի բիզանդաց, խոշտանգեալ զոմանս յԵղբարցն, եւ պատնիշտափակ պաշարմամբ արգելեալ զել եւ զմուտ երկուց ամբոցաց նոցին, անուանելոց *Գուլիելմաքար* (*Rupes Willelmi*) եւ *Հռուիսոյլի-քար* (*Rupes Ruisoli*), յայտ է թէ ՚ի սահմանամէջս Հայոց եւ Անտիոքայ<sup>150</sup>։ Քահանայապետն իրաւասէր, այլ եւ վրէժխնդիր պաշտպան ընչից ամենայն նուիրական անձանց, որպիսիք համարէին եւ ասպետքն կրօնակարգք, գրեաց առ Լեւոն (18 յանուարի, 1204) ստգտանելով ազնուապէս, եւ վասն այսր խնդրոյ կարգելով դատաւորս զեպիսկոպոսունս Վալլանիայ եւ Պիպլիայ քաղաքաց երկրին Ասորոց, յորդորելով անսալ բանից նոցին՝ իբրեւ եկեղեցական անդիմադարձ վճռոյ։ Եկեալ եպիսկոպոսացն, (գորոց զհետ թուի վերադարձեալ եւ Պետրոսի), առաջի արարին Լեւոնի զկամս Քահանայապետին. թագաւորն՝ յաւետ զմախանս ասպետացն նշմարելով ՚ի բանին՝ դժուարանայր առնուլ յանձն. ապա ՚ի կրկնել եւ յերեքկնել պատգամին՝ խոստացաւ զամենայն գոր գրաւեալն էր դարձուցանել առ ասպետսն, բայց միայն եւ զի նոքա երդմամբ ՚ի բաց կացցեն ՚ի հակառակելոյ իրաւանց թոռին իւրոյ<sup>151</sup>։ Իսկ իբրեւ նոքա խստաբար եւ խժաբար պատասխանի ետուն, եթէ բնաւ ամենեւին ոչ դադարեացուք ՚ի պաշտպանելոյ զպարիսպս Անտիոքայ ընդդէմ քո, մեծապէս սրտմտեցաւ Լեւոն, որոյ չէր մերկացեալ զառիւծու ճիրանսն, այլ գիտաց տակաւին ժոյժ ունել, եւ շատ համարեցաւ զանհաւան լռութիւնն։ Իսկ նուիրակն Պետրոս, որ յառաջն զանգիտելով բանադրել զպարտական Տրիպոլսեցին՝ խոյս ետ մինչեւ ՚ի Կ. Պօլիս, աստանօր աճապարեալ, ոչ դնելով ունկն բողոքոյ Լեւոնի առ Քահանայապետն, ժողով զումարեաց յԱնտիոք, ոչ զպատրիարք տեղոյն հրաւիրելով եւ ոչ զՀայոցն, եւ հրատարակեաց ընդ բանիւ լինել զՀայս. եւ ոչ այսչափ միայն, այլ եւ առ կաթողիկոսն Յովհաննէս գրեաց՝ զնոյն հրատարակել։ Գումարեալ եւ սորա զեպիսկոպոսունս իւր, արար պա-

<sup>150</sup> Թուղթք Իննովկենտեայ, Է, ՃՀԹ։

<sup>151</sup> Թուղթ Լեւոնի, յամի 1204։- **Հուրդէր**, Ը։